ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Աիդա Միրումյան, Մակրոտնտեսական քաղաքականության վարչության փորձագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Շանհայ, 2024 թվականի հուլիսի 31-ից օգոստոսի 16-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Շանհայի միջազգային ուսումնական «CIFAL» կենտրոն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մակրոտնտեսական կառավարման կարողություններ» խորագրով դասընթացին: Դասընթացի շրջանակներում ներկայացվել են Չինաստանի մակրոտնտեսական զարգացումները, իրականացվող հարկաբյուջետային և ֆինանսական միջոցառումները, առանձին ոլորտների զարգացմանը նպաստող ոլորտային քաղաքականությունները, դրանց ուղղությունները և զարգացման հնարավորությունները, ինչպես նաև այս ամենը համապարփակ կերպով ամփոփող Չինաստանի տնտեսական զարգացման ռազմավարական պլանը և սահմանված թիրախները:

5. Քննարկված թեմաները՝

1. Չինաստանի մակրոտնտեսական զարգացումներ, 14 - րդ հնգամյա պլանը,
2. Չինաստանի տնտեսություն. զարգացման նոր պարադիգմ և ռազմավարական հնարավորություններ,
3. հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացում՝ ուղղված տնտեսական զարգացման ապահովմանը,
4. Տնտեսական զարգացումը և Չինաստանի դերը համաշխարհային տնտեսությունում. Փաստեր, մարտահրավերներ և միտումներ,
5. Ժամանակակից արդյունաբերական համակարգ և նորարարական արդյունավետության խթանում,
6. Չինաստանի ազատ առևտրային պիլոտային գոտիները, դրանց առանձնահատկությունները,
7. Չինաստանի և Միավորված ազգերի զարգացման ծրագրի համագործակցության շրջանակներում գյուղական բնակավայրերում աղքատության հաղթահարման տեխնիկական աշխատանքային խմբի մոդելի և հաջողված փորձի ներկայացում,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացը անցկացվել է դասախոսությունների և այցելությունների ձևաչափով, ինչպես նաև մասնակցություն ունեցանք Չինաստանի և Միավորված ազգերի զարգացման ծրագրի համագործակցության շրջանակներում կազամկերպված աշխատաժողով-քննարկմանը: Դասախոսություններն ուղեկցվում էին թեմատիկ քննարկմամբ և երկրի փորձի ներկայացմամբ: Դասընթացն ամփոփվել է Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական վիճակը, իրականացվող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների ուղղությունները, ինչպես նաև ոլորտային քաղաքականությունները և խոշոր ներդրումային ծրագրերը ներկայացնող շնորհանդեսով՝ կիսելով մակրոտնտեսական կառավարման հայաստանյան փորձը:

7. Հանդիպման կամ հավաքի՝ ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

20 օգոստոս, 2024թ.